


ՄԱՐԴԸ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի ղեկավար՝ Ն. Համբարձումյան




Մարդը կենդանի արարած է՝ բնության զավակ,
նրա մի մասնիկը: Հետևաբար, նա չի՛ կարող ապրել
առանց բնության կամ առանց այն միջավայրի,
որտեղ ինքը գոյատևում է: Իրականում, սակայն,
բնությունը շատ լայն հասկացություն է. բնություն
են թե՛ մարդուն շրջապատող լեռներն ու գետերը,
թե՛ անտառն ու ծովը, թե՛ հեռավոր աստղերն ու
մեր մարմնի մեջ ապրող փոքրիկ մոլեկուլները:
Կարճ ասած՝ բնություն է ողջ անտեսանելի ու
տեսանելի տիեզերքն ու երկրի վրա եղող ամբողջ
կենսաբազմազանությունը:





Մարդը, որ դարեր շարունակ ապրում է մեր մուտրակի վրա, ինքն իրեն վարժեցրել է ապրել իր բնական միջավայրում: Մյուս կողմից էլ՝ հենց մարդն է ստեղծել, այսպես կոչված, երկրորդ բնությունը, որովհետև ամենատարբեր կարիքներից ելնելով՝ նա սկսել է կառուցել կացարաններ ու փողոցներ, գյուղեր ու քաղաքներ, հատել է անտառներ, անցկացրել ջրագծեր և այլն:



Այս արհեստական միջավայրը միշտ չէ, որ համահունչ է եղել նախաստեղծ ներդաշնակությանը, և այդ պատճառով է, որ գիտնականները տարբերակում են մարդ-բնություն կամ մարդ-հասարակություն հարաբերությունների 4 մեծ շրջաններ:





Առաջին փուլն իրենից ներկայացնում է մարդկության պատմության արշալույսը, երբ մարդն ամբողջությամբ ապրում էր նախաստեղծ բնության մեջ՝ աստվածացնելով այն: Բնապաշտ մարդը, որ լիովին կախված էր բնությունից, հավատում էր օդի, քամու, անձրևի և այլ հոգիների գոյությանը: Քարանձավում ապրող մարդը հավատում էր, որ իր արմատները բնության ու կենդանիների մեջ են, և խիստ պատիժներ էին սպասվում նրան, որը վնաս կհասցներ բնությանը:





Երկրորդ փուլ. բնությանն աստիճանաբար հակադրվելու շրջան

*Այս փուլում մարդն ընդլայնում է իր գործունեության
շրջանակները. ստեղծում է ճանապարհներ,
քաղաքներ, շենքեր, ջրանցքներ և այլն: Նա սկսում է է
մտածել, որ բնությունն ըմ տեսակ արտաքին
ստիպողականության միջավայր է, որը զրկում է ազատ
ընտրության հնարավորությունից, նրան ամբողջովին
հրեն ենթարկեցնելով:*





Ավելին, մարդն աստիճանաբար դադարում է բնապաշտ լինել և աստվածային ու վերերկրայինը զատում է, այսպես ասած, տեսանելի բնությունից՝ վերջինս համարելով ոչ կատարյալ և արարված անտեսանելի Կատարյալի կողմից:



**Երրորդ փուլ. բնության վրա գերիշխանության
հաստատման դարաշրջան՝ տեխնիկական-
մեքենայական փուլ**

Այս փուլում մարդը արդեն սկսում է հակադրվել
բնությանը, փորձելով վերջինիս իր կամքին ենթարկեցնել:
Մարդիկ սկսում են բնության ամենատարբեր
օրինաչափություններ հայտնաբերել և աստիճանաբար
սկսում են հավատալ, որ կարող են լիովին տնօրինել
բնությանը: Ստեղծվում է արհեստածին՝ տեխնոգեն մի
(տեխնե-արհեստ, գենեգիս-ծագում) միջավայր, և մարդը
սկսում է ապրել ավելի շատ արհեստական, քան բնական
միջավայրում: Սկսում են բնությունը շահագործել շատ
անխոհեմ կերպով:





Անտառներն են վերացնում, անխնա ծախսում են
ռեսուրսները, փորձում են փոխել գետերի հունը և
այլն: Չիտեսնք արդեն այն մասին, որ հատկապես
արևմտյան արդյունաբերական
հեղափոխությունն առհասարակ վտանգեց
բնական համակարգերի կայունությունն ու
համաչափ զարգացումը: Այսպիսով, այս փուլում
խախտվեց Մեծ հավասարակշռությունը:









Չորրորդ կամ վերջին փուլ. բնության արժևորման և պահպանության դարաշրջան

Բնության արժևորման և պահպանության շրջանը, թերևս, հենց այն շրջանն է, որում ապրում է ժամանակակից մարդը: Ճիշտ է, կան երկրներ, հասարակություններ, որոնցում բնության պահպանության հարցերը դեռ լիովին չեն գիտակցվել, բայց, խոշոր հաշվով, մարդկությունը հասկացավ իր վերաբերմունքը բնության նկատմամբ և որոշեց նորովի վերաբերվել իր Մեծ Տանը:



Մարդիկ հասկացան, որ ամենալավ բանը, որը կարող են փոխանցել հաջորդ սերնդին՝ մաքուր և անվտանգ միջավայրն է: Հասարակություն գիտակցեց, որ բնությունն իր տունն է, և առաջացավ մի նոր գիտություն՝ էկոլոգիան, որ գիտություն է տան մասին:



Նոր գիտակցությունը մարդկանց հուշեց, որ տան մասին հին գիտությունը տնտեսագիտությունը, պետք է այնպես գործադրել, որ քո բնական միջավայրը՝ քո Մեծ Տունը, չկորցնի իր բնական հավասարակշռությունը, որ հաջորդ սերունդները նույնպես ունենան մաքուր ջրից, օդից, բնական պաշարներից և անխախտ բնությունից օգտվելու հնարավորություն:





Շատ լավ է, որ ներկայումս համաշխարհային կառավարություններն էլ են այս գիտակցությամբ աշխատում և ձևավորում են բնության պահպանությանն ուղղված օրենսդրություն, բայց համոզված եմ, որ մեզնից յուրաքանչյուրն էլ իր հերթին պետք է գիտակցի, որ մենք ոչ միայն կոնկրետ երկրի, քաղաքի, փողոցի, շենքի ու բնակարանի, այլև մոլորակի բնակիչ ենք և Մայր Բնությունը պիտի փայփայենք մեր աչքի լույսի պես:




ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ

Արեգակնային էներգիան վերականգնվող էներգիայի կարևոր աղբյուր է, իսկ դրա տեխնոլոգիաները լայնորեն բնութագրվում են որպես ակտիվ արևային կամ պասիվ արևային կախված նրանից, թե ինչպես են դրանք վերցնում և տարածում արևային էներգիան կամ այն փոխարկում արևային հոսանքի:



Մասն է կազմում
Վերականգնվող էներգիայի



Կենսավառելիք - Կենսազանգված - Կենսագազ -
Երկրաջերմային - **Օվկիանոսի ալիքի հզորություն** -
Արևային էներգիա -
Մակընթացային էլեկտրակայան -
Օվկիանոսի ալիքի հզորություն -
Հողմաէներգետիկա
Ցանկ ըստ երկրի -
Շուկայավարման և քաղաքականության միտումներ

դ · ք · ի


Արեգակնային էներգիայի մեծ ծավալն այն դարձնում է էլեկտրաէներգիայի խիստ գրավիչ աղբյուր: Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրն իր 2000 թվականի Համաշխարհային էներգետիկ գնահատման մեջ նշել է, որ արեգակնային էներգիայի տարեկան ներուժը կազմում է 1,575–49,837 էքսաջոուլ (EJ): Այս թիվը մի քանի անգամ ավելի մեծ է, քան համաշխարհային էներգասպառման ընդհանուր ծավալը, որը 2012 թվականին կազմել է 559.8 էքսաջոուլ:



Արևային էներգիայի մոտավորապես կեսը հասնում է երկիր

Ակտիվ արևային տեխնոլոգիաներն էներգիան օգտագործելու համար կիրառում են լուսազալվանային համակարգեր, կենտրոնացված արեգակնային էներգիա ու արևային ջրատաքացուցիչներ:

Պասիվ արևային տեխնոլոգիաները ներառում են շինությունը դեպի արևը կառուցելը, համապատասխան ջերմային զանգված կամ լուսացիր հատկություններ ունեցող նյութերի ընտրությունը և բնական օդափոխությունն ապահովող տարածքների նախագծումը:



*Արեգակնային Էներգիայով աշխատող
ինքնաթիռը 2015 թվականին շուրջերկրյա
թռիչք կատարելիս*

*Աշխարհն ավելի ու ավելի կենտրոնացած է կայուն ու
էկոլոգիապես մաքուր կենսակերպի վրա, արևային
էներգիան էլ դարձել է վերականգնվող աղբյուրների
որոնման հիմնական դերակատարը:
Վերականգնվող էներգիայի դինամիկ աշխարհում
արևային էներգիան առանձնանում է որպես
կայունության և ծախսարդյունավետության լուսատու*







Հայաստանում արագորեն զարգանում է արևային
ջերմային էներգետիկան:

Մասնավոր հատվածի կողմից ներմուծվում են ինչպես
արևային ջրատաքացուցիչ համակարգերի առանձին
մասեր, դրանց հետագա հավաքակցման նպատակով,
այնպես էլ ամբողջական համակարգեր:



ՀԱՆՐԱՅՈՒՄԻ ԲՅՈՒՆ

